

ՀՏԴ 338:351.864

**ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

Երևանի պետական համալսարան

Հաշվի առնելով պատերազմը սպասարկելու՝ ռազմաարդյունաբերական համալիրը մրցունակ պահելու համար անհրաժեշտ ներքին պաշարների սահմանափակ բնույթը, Հայաստանի և Արցախի պարագայում նպատակահարմար է հիշյալ համալիրը դիտարկել ոչ թե որպես տնտեսական գնացքի վերջին և ամենածանրաքաշ վագոն, այլ որպես արագընթաց տնտեսական շոգեքարշ: Այս պարագայում ռազմաարդյունաբերական համալիրը կարող է ոչ միայն ձևավորել իր նյութատեխնիկական և գիտատեխնիկական բազան, այլև բացի սպառազինություններից, տնտեսությանն առաջարկել այսպես կոչված «երկակի նշանակության» ապրանքներ և ծառայություններ, որոնց մի մասը կարող է ներառվել նաև արտահանման հողվածների շարքում՝ սկսած էլեկտրոնային սարքերից, սննդի և թեթև արդյունաբերության արտադրանքի որոշ տեսակներից, վերջացրած տեղեկատվական և հաղորդակցության, բարձր տեխնոլոգիաներով, էներգետիկ սարքերով, սարքաշինությամբ, ճարտարագիտության տարբեր ճյուղերով և այլն:

Բանալի բառեր. «երկակի նշանակության» ապրանքներ, ռազմաարդյունաբերական համալիր, տեխնոլոգիական անվտանգություն, մրցունակություն:

Ներածություն

Եթե մինչև 2001թ. նյույորքյան ահաբեկչությունը յուրաքանչյուր երկիր ինքն էր որոշում նման ապրանքների և տեխնոլոգիաների բնույթը, կիրառման ոլորտների և համագործակցության համար ձեռնտու երկրների նպատակահարմարությունը [1], ապա հայտնի իրադարձություններից, հատկապես, հակաահաբեկչական կոալիցիայի ձևավորումից հետո նման հարցերը կարգավորվում են կոալիցիայի անդամ երկրների կողմից ընդունված միջազգային նորմերի համապատասխան: Մասնավորապես, կոալիցիայի անդամ երկրները, ներառյալ Հայաստանը, ստանձնել են օրենսդրական և իրավական բնույթի մի շարք պարտավորություններ, որոնք ոչ միայն կանոնակարգում են ոլորտը, այլև հնարավորություն են ընձեռում համատեղ վերահսկողություն սահմանել նման ապրանքների ու տեխնոլոգիաների արտադրության և հետագա շարժի ուղղությամբ: Այս

առումով խիստ կարևորվում է 2003թ. սեպտեմբերին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունած «Երկակի նշանակության ապրանքների ու տեխնոլոգիաների արտահանման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի սեպտեմբերի 24-ի ՀՕ-7-Ն օրենքը, որը հետագայում լրամշակվել և փոփոխությունների է ենթարկվել, և, ի վերջո, նոր բովանդակությամբ ընդունվել է 2010թ. ապրիլին [2]:

Հատկանշական է, որ երկակի նշանակության ապրանքներ են համարվում յուրաքանչյուր տեսակի գույք, որ կիրառվում է քաղաքացիական նպատակների համար և իրենց բնույթին ու հատկություններին համապատասխան՝ կարող է օգտագործվել նաև ռազմական նպատակներով, ներառյալ՝ զանգվածային ոչնչացման զենքի և դրա փոխադրման միջոցների ստեղծման համար: Ինչ վերաբերվում է երկակի նշանակության տեղեկատվությանը և մտավոր գործունեության արդյունքներին, ապա դրանցում ներառվում են ցանկացած բնույթի տեղեկատվություն, մտավոր գործունեության արդյունք, համակարգչային ծրագրեր, որոնք կիրառվում են քաղաքացիական նպատակների համար և իրենց բնույթին համապատասխան՝ կարող են օգտագործվել նաև ռազմական նպատակներով, ներառյալ՝ զանգվածային ոչնչացման զենքի և դրա փոխադրման միջոցների ստեղծման համար: Կարևոր է նկատել, օրենքով սահմանված կարգի խախտմամբ հսկվող ոչ նյութական արժեքների փոխանցման համար պատասխանատվություն նախատեսվում է միայն այն դեպքում, երբ դրանով զբաղվողը գիտակցել է կամ պարտավոր էր գիտակցել, որ դրանք, բացի քաղաքացիական նպատակներից, կարող են օգտագործվել նաև ռազմական նպատակներով, ներառյալ՝ զանգվածային ոչնչացման զենքի և դրա փոխադրման միջոցների ստեղծման համար:

Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման խնդիրներն ուղղակի առնչություն ունեն տեխնոլոգիական անվտանգության հետ: Ընդամին, ինչպես մակրո, այնպես էլ միկրո մակարդակում տնտեսական անվտանգության ապահովման հարցում ներկայում կարևորվում են ձեռնարկությունների և պետության տեխնոլոգիական անվտանգության վրա ազդող բազմաբնույթ գործոնները [3]:

Ազգային տնտեսության անվտանգությունը և ռազմաարդյունաբերական համալիրը

Ակնհայտ է, որ ազգային տնտեսության անվտանգությունը հնարավոր չէ պատկերացնել առանց նրա ռազմաարդյունաբերական համալիրի (ՌԱՀ) կայուն գործունեության, իսկ երկրի տեխնոլոգիական անվտանգության ապահովման գլխավոր ուղղությունն առանց ռազմական արդյունաբերության «երկակի» տեխնոլոգիաների առաջնահերթ զարգացման:

Վերջինս գնահատվում է որպես ռազմավարական բնույթի կարևորագույն ճանապարհ՝ պահանջվող ռազմական տեխնոլոգիաների սահմանափակ պետական ֆինանսավորման պայմաններում ՌԱՀ կառուցվածքի որոշակի ադապտացման համար, ինչն անհրաժեշտ է երկրի բավարար պաշտպանունակությունն ապահովելու համար:

Մեր համոզմամբ, պաշտպանության ոլորտում նորարարությունների զարգացման պետական ֆինանսավորման կառուցվածքում ազգային տեխնոլոգիական բազան միջանկյալ տեղ կարող է զբաղեցնել հիմնարար գիտական ծրագրերի և տարբեր պետական գերատեսչությունների կիրառական ծրագրերի միջև, որոնք ֆինանսավորվում են պետական ծրագրերի շրջանակներում: Արդյունքում՝ միջգերատեսչական մրցակցությունը դրական իմաստով կարող է ավելի սրվել՝ բարձր տեխնոլոգիաների մշակմանը հատկացվող պետական սահմանափակ միջոցների համար: Այդ իմաստով նպատակահարմար է անդրադառնալ երկրի ՌԱՀ և քաղաքացիական արդյունաբերության հատվածների փոխազդեցությունների որոշակի առանձնահատկություններին:

Անկախության տարիներին երկրի ՌԱՀ ձեռնարկությունների մեծամասնությունը միջկառուցվածքային համագործակցության բավարար մակարդակի չհասավ: Նրանց մեծ մասը ձևավորվել է հիմնականում իրենց կազմի մեջ մտնող ձեռնարկությունների արտադրական զուգորդման և մասնակցության սկզբունքների վրա: Ներկայում ռազմական և քաղաքացիական արդյունաբերության միջև տեխնոլոգիական ճեղքվածքը, նախկինի պես մեծ է: Հայաստանի և արտերկրի տնտեսագետների բազմաթիվ ուսումնասիրություններից պարզվել է, որ խորհրդային կարգերի օրոք նորարարությունների փոխներթափանցման հիմնական խնդիրն այն չէր, որ զինվորականները չէին ցանկանում հաղորդել իրենց տեխնոլոգիական գաղտնիքները քաղաքացիական արդյունաբերությանը: Խնդիրն այլ էր՝ բարձր տեխնոլոգիաների ներդրման համար՝ արդյունավետ խթանների բացակայությունը [4]: Էժան աշխատուժը, ազատությունը՝ ներքին և միջճյուղային մրցակցությունից, յուրաքանչյուր ձեռնարկության ներդրումային պաշարների կենտրոնացված ձևավորումը, թողարկման պլանի թվային ցուցանիշների գերակայությունը՝ այս ամենը խորհրդային հիմնարկներին չէին մղում՝ ռազմական արդյունաբերությունից վերցնելու տեխնոլոգիական նորույթները: Ինչ վերաբերվում է անկախության տարիներին պետության ձեռնարկած քայլերին, ապա դրանց մեջ կարևոր է արժևորել նոր՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ստեղծումը, որի մի շարք գործառույթներ տարբեր տարիներին բաշխվել են ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ էկոնոմիկայի նախարարության զանազան ստորաբաժանումների միջև: Մասնավորապես, կարևոր

են ինչպես հեռանկարային զարգացման, այնպես էլ վերջինիս միտված 2020 թ. «Մասնագետների պատրաստման բարձրագույն ուսումնական հաստատություններ – մասնավոր հատված համագործակցություն» ծրագիրը, որով հստակեցվում են գերակա ոլորտը, ռազմավարական նպատակները, մարտահրավերի հաղթահարումը, կարիքների գնահատումը, թիրախային խնդիրների հստակեցումը: Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ի տարբերություն բազմաթիվ այլ ծրագրերի, այստեղ բարձր տեխնոլոգիաների հավասարակշռված զարգացման խնդիր է դրվում, այսինքն՝ դրա ապահովումը պայմանավորելով հանրապետության բոլոր մարզերում պաշարների համաչափ բաշխվածությամբ և վերջիններս ինտեգրելով համայնքների զարգացման առաջնահերթություններին [5]: Այս ամենով հանդերձ՝ ծրագրի արդյունավետ իրականացումը մենք տեսնում ենք աշխատանքային պլանի մշակմամբ և իրագործմամբ՝ ըստ ժամկետների, պատասխանատուների և համապատասխան կառույցների ներգրավման:

Ակնհայտ է, որ այս ամենով չի կարելի սահմանափակել ոլորտի զարգացման իրավական և ինստիտուցիոնալ հիմքերը: Հեռանկարային զարգացման ծրագրի մշակումը հնարավորություն կտա երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտադրության զարգացմանը հաղորդել համալիր բնույթ: Սա, իր հերթին, պահանջում է ոչ միայն ոլորտային զարգացման երկարաժամկետ ռազմավարության մշակում, այլև դրա բոլոր ուղղությունների համաձայնեցում՝ տնտեսության զարգացման հեռանկարային զարգացման առանձին ուղղությունների հետ: Միաժամանակ, հաշվի առնելով խնդրի կենսական նշանակությունը, նպատակահարմար ենք գտնում ոլորտի համակարգաստեղծ հիմնադրույթները ներառել նաև Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարության մեջ:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտադրության խնդիրների ճիշտ ձևակերպման նպատակով անհրաժեշտ է ընդլայնել պետություն – մասնավոր հատված համագործակցությունը, դրանում ներգրավելով նաև քաղաքացիական հանրության փորձագիտական հատվածը: Միայն ոլորտի մասնագետների օգնությամբ հնարավոր կլինի իրատեսորեն գնահատել առանձնահատուկ կարևորության հիշյալ ոլորտի հնարավորությունները և զարգացման նախապայմանները, ինչպես նաև նրանց ներգրավել արտերկրի հետ համագործակցության երկկողմ և բազմակողմ ծրագրերում:

Փորձագետների ներգրավման կարևոր ձևաչափերից կարելի է համարել պետության տարբեր օղակների կողմից կազմակերպվող մրցույթները: Ներկայում նկատելի է ոլորտի նորաստեղծ կառույցի հետևողականությունն անգամ համավարակի պայմաններում հիշյալ նպատակներին

հասնելու ուղղությամբ ձեռնարկած քայլերի ուղղությամբ: Խոսքը համաֆինանսավորման դրամաշնորհների մրցույթի մասին է՝ «Գաղափարից մինչև գործարարություն» ծրագրի շրջանակներում, որն իրականացվել է մեկ փուլով, որը ներառում է շահադրաման դրույթներ՝ բարձր տեխնոլոգիաների զարգացման ասպարեզում գեներացված գաղափարները կյանքի կոչելու նպատակով [6]:

Երկրի տեխնոլոգիական անվտանգությունը

Նոր՝ ազգային տեխնոլոգիական բազայի ձևավորման գաղափարախոսությունն անհրաժեշտաբար պետք է կառուցվի բարձր տեխնոլոգիաների արտաքին խթանների սկզբունքների վրա՝ դրանք ներդնելու արտադրության մեջ: Պետական սահմանափակ պաշարների հերթական չափաբաժինները հատկացվում են հատկապես պահպանելու, այլ ոչ՝ վերամշակող քաղաքացիական արդյունաբերության մեջ երկակի տեխնոլոգիաների տարածման համար: Նման եղանակով մշակված ֆինանսավորման ծրագրերն ինքնաբերաբար կարող են ուղղված լինել ոչ թե պահանջարկի նորացմանը, այլ եղած առաջարկի ծավալների պահպանմանը: Քանի դեռ չեն վերացվել նախորդ տնտեսակարգին բնորոշ ավանդական մոտեցումները, առաջվա պես կմնա պետական զգալի հատկացումների անօգուտ ծախսերի վտանգը:

Գաղտնիք չէ, որ «երկակի տեխնոլոգիաների» խթանման քաղաքականությունը սկզբունքորեն փոխառնված է ամերիկյան փորձից, որտեղ որոշակի իմաստով վերածնվել է արդյունաբերական քաղաքականության մարտավարությունը: Իրականում երկրի տեխնոլոգիական առաջընթացի խթանման պետական քաղաքականությունը պետք է լինի, այսպես կոչված, ռազմաքաղաքացիական ինտեգրումը՝ «երկակի տեխնոլոգիաների» զարգացման և դրանց առևտրայնացման հիման վրա: Խոսքը քաղաքացիական և ռազմական արդյունաբերության փոխհարստացման գործընթացի խթանման մասին է՝ տնտեսության այդ երկու բաժիններում կազմակերպչական, վարչական և տեխնոլոգիական խոչընդոտների վերացման արդյունքում: Բայց ամերիկյան «երկակի տեխնոլոգիաների» խթանման քաղաքականության և տեղական համապատասխան քայլերի տարբերությունն այն է, որ ԱՄՆ-ում չեն փորձում պարզել, թե ինչպես ստիպել ընդօրինակել մասնավոր քաղաքացիական ձեռնարկություններին՝ պաշտպանական հատվածի տեխնոլոգիական նորույթները: Քաղաքացիական արդյունաբերության տեխնոլոգիական նորույթների հանդեպ պահանջարկն ավանդականորեն մեծ է, քանի որ այն հենվում է լրացուցիչ եկամուտ ստանալու տնտեսական շահի վրա: Այդ պատճառով ԱՄՆ-ի համար ավելի կարևոր է «երկակի տեխնոլոգիաների» քաղաքականության

երկրորդ կողմը՝ քաղաքացիական հատվածի էժանագին տեխնոլոգիաների փոխառության հիման վրա ռազմական արդյունաբերության վիճակի լավացումը [7]: Հայաստանում, իհարկե, իրավիճակն այլ է. քաղաքացիական արդյունաբերության նորացումների ակտիվությունը բոլորովին չի աճել խորհրդային ժամանակներից: Պարզապես վերը թվարկված պլանային տնտեսությունում գործող գործոններին փոխարինելու եկան՝ նորացումների խոչընդոտներ հանդիսացող «անցումային» պատճառները (ավանդական տնտեսական կապերի խզում, վճարումների ճգնաժամ, ներմուծվող ապրանքների ծավալների աճ, առանձին հիմնարկների և գործունեության ոլորտների մենաշնորհացում և այլն): Բացի այդ, կորցնելով նախկին պետության ՌԱՀ մի մասը կազմելու կարգավիճակը, Հայաստանը օբյեկտիվ լուրջ մարտահրավերներ դիմակայեց սեփական ՌԱՀ ձևավորելու ճանապարհին: Ստեղծվեց մի իրավիճակ, երբ տեղական պաշտպանական արդյունաբերությունը տեխնոլոգիապես հետամնաց քաղաքացիական վերամշակող արդյունաբերությունից ոչինչ չունի վերցնելու կամ ակնկալելու: Այդ պատճառով «երկակի տեխնոլոգիաների» քաղաքականության մարտավարական նպատակը՝ քաղաքացիական և ռազմական արդյունաբերության տեխնոլոգիական մակարդակների միաժամանակյա ամրացումն է՝ նորարարությունների փոխադարձ ներթափանցումների հիման վրա:

Վերադառնալով ՌԱՀ տեխնոլոգիական անվտանգության խնդրին՝ պետք է նկատել, որ «երկակի տեխնոլոգիաների» քաղաքականությունն արդյունավետ է այդ ուղղությամբ միայն այն ժամանակ, երբ այն նպաստում է ինչպես ռազմական արդյունաբերության, այնպես էլ նրա հետ կապված քաղաքացիական ճյուղերի միաժամանակյա տեխնոլոգիական նորացմանը: Իրականացնելով ռազմական-քաղաքացիական համագործակցությունը և միջոցներ ներդնելով «երկակի տեխնոլոգիաների» մեջ՝ պետությունը դրանով իսկ իր վրայից կարող է որոշակիորեն հանել ծանր ֆինանսական բեռի մեծ մասը, որը պահանջվում է ազգային ՌԱՀ-ի տեխնոլոգիական անկախությունը պահպանելու համար:

Մյուս կողմից, «երկակի տեխնոլոգիաների» ոլորտը ընդլայնելով՝ պետությունը բարձրացնում է նաև ազգային տեխնոլոգիական բազայի անկախության աստիճանը, նպաստում է ռազմական և հարակից ձեռնարկությունների հետ արտադրանքի զարգացմանն այնպիսի տեխնոլոգիաների ճյուղերում, որոնք մինչ այդ արդեն գոյություն ունեին միայն արտերկրում: Երբ բացակայում է ռազմական-քաղաքացիական համագործակցությունը, պետությունը հարկադրված իր վրա է վերցնում ռազմական կիրառության տեխնոլոգիաների մշակման անհրաժեշտ ծախսերը՝ ռազմական արդյունաբերության փակ գոտում: Ընդ որում՝ պետք է հաշվի առնել

նաև այն, որ ռազմական տեխնոլոգիական ներուժի զարգացումը հնարավոր է միայն մի որոշակի սահմանում. դրանց հետևում ծանր բեռ է, որն, ի վերջո, մնում է պետական բյուջեի վրա, իսկ վերջինս արդեն ի վիճակի չի լինի դիմակայել քաղաքացիական ճյուղերի տեխնոլոգիական հետընթացին, եթե դա տեղի է ունենում մենաշնորհների և օլիգոպոլիաների ձևավորման արդյունքում:

Մի շարք ռազմական տեխնոլոգիաների փոխակերպումը «երկակիների» կարգի՝ պետության վրայից կարող է հանել նաև զգալի ֆինանսական պարտավորություններ այնքանով, որքանով տվյալ տեխնոլոգիաների քաղաքացիական բաժնեմասը ընդունակ է փոխհատուցելու դրանց մշակումների ծախսերը՝ համապատասխան առևտրային նախագծերի իրականացման միջոցով: Այս իրավիճակում կառավարությունը հնարավորություն է ստանում ազատված միջոցների մեծ մասն ուղղել հույժ կարևոր ռազմական տեխնոլոգիաների նորագույն մշակումների վրա: Դրանում էլ հենց դրսևորվում է ՌԱՀ տեխնոլոգիական անվտանգության ռազմավարական բաղադրամասը՝ կապված «երկակի տեխնոլոգիաների» հետ: Սա, ի դեպ, կարելի է հաշվի առնել չավարտված պատերազմի վիճակում գտնվող մեր երկրի զինված ուժերի հետագա արդիականացման, ինչպես նաև ոլորտի ռազմավարության մշակման ժամանակ:

Այսպիսով, ՌԱՀ տեխնոլոգիական անվտանգության արդյունավետ ռազմավարությունը և մարտավարությունը պետք է ձևավորել հաշվի առնելով ոչ այնքան «երկակի» կիրառության տեխնոլոգիաների նորացման առաջարկների խթանները, որքան՝ մասնավոր հատվածի կողմից վերջինիս պահանջարկի խրախուսման քաղաքական ուղեգիծը: Քաղաքացիական արտադրանքի լայն սպառման շուկաներ դուրս եկող խոշոր միջնուղային տեղական կամ համատեղ ընկերությունները պետք է շահագրգռված լինեն՝ պաշտպանական արդյունաբերության առաջարկած «երկակի տեխնոլոգիաներում» փոխադարձ ներդրումների մեջ: Արդյունաբերության արդիականացման ամերիկյան քաղաքականությունը՝ ռազմական-քաղաքացիական համագործակցության հիմքի վրա, ենթադրում է՝ հզոր կորպորացիաների կողմից պետական գիտական կենտրոնների և լաբորատորիաների մշակած, ռազմական նշանակության տեխնոլոգիաների առևտրային կիրառման փոխադարձ շահագրգռություն: Նման կառույցները տեղակայված են Սան Դիեգոյում, Լոս Ալամոսում, Լոուրենսում, Լիվերմորում և այլուր [8]: Մեր երկրում դեռևս նման ծրագրերում «երկակի տեխնոլոգիաների» և պաշտպանական արդյունաբերության փոխարկման խթանման այդպիսի շահագրգռվածության անհրաժեշտություն առայժմ հաշվի չի առնվել: Դրանով իսկ, ինչպես նշում են մասնագետները,

պաշարների անբավարար լինելը և պաշտպանական հանգուցային գիտահետազոտական ինստիտուտների գոյատևման սպառնալիքը՝ «երկակի տեխնոլոգիաներ» հասկացության իմաստը հասցրեցին հարուստ ռազմական գիտական հիմնարկություններում բյուջեից դուրս ֆինանսավորման աղբյուրներ փնտրելուն [9]:

Պեղության դերը «երկակի տեխնոլոգիաների» զարգացման գործում

Կարևոր է նաև վերլուծել և պարզել, թե ինչով է սպառնում մեզ մոտ արմատացած «երկակի տեխնոլոգիաների» խթանման «առաջարկային» քաղաքականությունը՝ ՌԱՀ տեխնոլոգիական անվտանգությանը: Այս հարցին պատասխանելու համար հարկավոր է դիմել տեխնոլոգիական անվտանգության գործոնների վերլուծությանը նվազագույն մակարդակով, այսինքն՝ ՀԱՊԿ և այլ տարածաշրջանային և միջազգային նախագծերում ընդգրկված առանձին պաշտպանական հիմնարկությունների մակարդակով: Ներկայում պաշտպանական ձեռնարկությունների տեխնոլոգիական ներուժին սպառնացող գործոններից կարելի է առանձնացնել գիտական հետազոտությունների նյութական բազայի պակաս վարկավորումը և հիմնարկության գիտատեխնոլոգիական ներուժի կրճատումը, համալրող, կոմպլեկտավորող նյութերի գների աճը, ինչպես նաև ենթակառուցների ծառայությունների (էլեկտրաէներգիայի, տրանսպորտի, գազի և ջրի սակագների աճը, գիտատար արտադրանքի ներքին ցածր պահանջարկը և պետական հովանավորչության անբավարար մակարդակը՝ բարձր տեխնոլոգիաների արտադրանքի արտահանման աջակցության առումով: Նշված խնդիրների արդյունավետ հանգուցալուծման համար նպատակահարմար է, օրինակ, նոր տեխնոլոգիայի բարեհաջող զարգացման համար տեխնոլոգիական շղթայի յուրաքանչյուր փուլում արտադրության ծախսերի փոխհատուցում՝ հերթական պատվիրատուի միջոցների հաշվին: Տեխնոլոգիական շղթայում բազմաթիվ սպառողների աննշան ֆինանսական հզորությունը և վճարումների համակարգի որոշակի ճգնաժամը՝ ամբողջ տնտեսությունում, տեխնոլոգիական նորարարությունների փոխհատուցված իրացման շանսերը ներքին շուկայում, պետք է գնահատել որպես նվազագույն: Նման իրավիճակում ծագում է ՌԱՀ հիմնական աշխարհատնտեսական տեխնոլոգիական անվտանգության սպառնալիքը. կորցնելով սեփական մշակումները մեծ ծավալներով ներքին շուկայում իրացման հույսերը՝ պաշտպանական ինստիտուտները տեխնոլոգիաների, «նոուհաու» և նոր արտադրանքի վաճառքի հնարավորություններ են փնտրում արտաքին շուկաներում: Հասկանալի է, որ արտահանող երկրի տեխնոլոգիաների արտահանումը սպառնալիք չի ներկայացնում արդյունաբերական բազայի համար, եթե այդ բազան բավարար

չափով ամուր է: Ամերիկյան տեխնոլոգիական գիտական կորպորացիաները տեխնոլոգիայի արտահանումն արտերկիր սկսում են միայն նոր արտադրանքի ներքին արտադրության յուրացումից հետո: Մեր երկրում, իհարկե, նման կառույցներ չկան, բացակայում է կայուն արդյունաբերական բազան՝ նոր տեխնոլոգիաների իրականացման համար: Այդ պատճառով էլ, խթանելով «երկակի տեխնոլոգիաների» զարգացմանը՝ համապատասխան ծրագրի շրջանակներում, պետությունը լավագույն դեպքում սատարում է նոր տեխնոլոգիաների զարգացմանը՝ մինչև կիրառական և փորձնական արտադրության փուլը: Միաժամանակ, չձևավորելով նպաստավոր պայմաններ սեփական երկրում բարձր տեխնոլոգիաների արդյունաբերական ներդրման համար, պետությունն ուղղակիորեն օժանդակում է գիտատար արտադրանքի արտերկիր արտադրողներին՝ զարգացմանը միտված հետազոտությունների՝ R&D վրա կատարվող ծախսերի մասով [10]: Գնելով հայրենական «պաշտպանությունից» նորագույն տեխնոլոգիաներ, որոնք օգտագործվում են միջանկյալ արտադրանքի արտադրության մեջ, արտասահմանյան ընկերություններն այնուհետև արտահանում են պատրաստի ապրանքներ համաշխարհային շուկաներ: Չպետք է անտեսել նաև այն հնարավորությունները, որոնք ընձեռնված են Հայաստանին ԵԱՏՄ անդամակցության համատեքստում:

Առայժմ երկրի տնտեսական և տեխնոլոգիական անվտանգության ապահովմանը վերաբերող պետական պաշտոնական փաստաթղթերում՝ չի հայտարարված կայուն ներքին կապերի ստեղծման անհրաժեշտության մասին՝ գիտատար տեխնոլոգիաներ արտադրողների և սպառողների միջև: Առավելապես խոսքը գնում է երկրի գիտական ներուժի աջակցության և առաջատար գիտական դպրոցների պահպանման մասին, որոնք ընդունակ են ապահովելու կիսապատերազմական իրավիճակում Հայաստանի անկախությունը ԳՏԱ սպառազինությունների կարևոր ուղղություններում: Կարևոր է նաև պարզել, թե ինչի հաշվին է կարող է իրականացվել անհրաժեշտ աջակցությունը. գիտատար արտադրանքի տեղական արտադրության լայնամասշտաբ, զանգվածային ծավալման, թե տեղական գիտական և տեխնոլոգիական ներուժի հանդեպ արտերկրի ընկերությունների հետաքրքրությունների պահպանման: Ակնհայտ է, որ այս հարցում ևս կարևոր է հիմք ընդունել Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարությունը և տնտեսական անվտանգության ապահովման գերակայությունները [11]:

Հաշվի առնելով համաշխարհային տնտեսությունում և տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումները՝ կարելի է արձանագրել, որ Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացումն առաջին հերթին

պայմանավորված է երկրում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման մակարդակով [12]: Համեմատության համար նշենք, որ այս ոլորտի մասնագետները ոչ միայն զարգացող, այլև զարգացած երկրներում դասվում են որակյալ աշխատուժի այն կարգին, որը XXI դարում գործազուրկ երբեք չի դառնա [13]: Այսինքն՝ երկրի մտավոր կարողությունն անհրաժեշտաբար պետք է օգտագործվի նաև զբաղվածության խնդրի արդյունավետ լուծման համար [14]: Իհարկե, մրցակցությունն այս ասպարեզում թույլ չի տալիս միայն լավատեսական սցենարներ ուրվագծել: Մրցունակության առումով Հայաստանը պետք է հաշվի նստի ոլորտի մրցունակության չափորոշիչները (benchmarks) թելադրող Հնդկաստանի, Չինաստանի, Իսրայելի և այլոց փորձի հետ ու փորձի դասեր քաղել՝ պատրաստ լինելու այսօրվա և վաղվա մարտահրավերներին [15]:

Ակնհայտ է դառնում, որ այսօր գոյություն ունեցող ո՛չ պետական ֆինանսավորումը, ո՛չ նպատակային քաղաքականությունն առանձնապես մեծ ոգևորության հիմքերի առիթ չեն տալիս: Հետևաբար, երկակի նշանակության ապրանքների ու տեխնոլոգիաների արտադրության և արտահանման ֆինանսավորման խնդիրների լուծումը պետք է դիտարկել համակարգված՝ ոլորտի զարգացման ծրագրի մշակման և դրա իրականացման շրջանակներում: Մի կողմից, նման հավակնոտ ծրագիրը պահանջում է, մեր գնահատմամբ, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գրեթե կեսը կազմող ֆինանսական միջոցներ, ուստի կարող է թերահավատություն առաջացնել իրատեսականության առումով: Մյուս կողմից, հաշվի առնելով նման ծրագրի կարևորությունն ու տնտեսության մյուս ճյուղերին առնչություններն ու համապարփակ բնույթը, համոզված ենք, որ դրա նախապատրաստական փուլում գրեթե բոլոր ոլորտների կառավարման կառուցակարգերի, ներառյալ՝ նյութական և մտավոր ներուժի ներգրավվածությունը կարող է տնտեսել ծախսերի զգալի մասը: Ինչ վերաբերում է բուն արտադրությունների կազմակերպմանը, ապա խնդիրը կարող է հանգուցալուծվել խառը՝ պետության և մասնավոր հատվածի մասնակցությամբ բարձր տեխնոլոգիաների հիմնադրամի միջոցներով, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի կազմակերպած մրցույթների օգնությամբ: Վերջապես, հիշյալ արտադրությունների ֆինանսավորումը, մեր կարծիքով, կարող է իրականացվել բաժնետիրական սկզբունքով՝ յուրաքանչյուր ենթաոլորտի գծով արտադրության հիմնելու նպատակով թողարկելով պետական արժեթղթեր, որոնք կտեղաբաշխվեն Հայաստանում և արտերկրում: Առաջարկվող և դրանցից բխող բոլոր գործընթացները ենթադրում են պետության ակտիվ մասնակցություն, առաջին հերթին՝ կարգավորիչ և վերահսկիչ գործառույթներով:

Առավել կարևորվում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի դերը, երբ այն դիտարկում ենք որպես երկրի արտահանման կարևոր ուղղություններից մեկը և որպես երկրի տեղեկատվական անվտանգության ապահովման առանցքային գործոն:

Արժևորված դրամը տարիներ շարունակ որոշակի վնասներ է հասցրել հանրապետության արտահանման ուղղվածության ճյուղերին և հանգեցրել նրան, որ երկրի առևտրային հաշվեկշռում ներմուծման ծավալները գրեթե երեք անգամ գերազանցում են արտահանման ծավալները: Խնդրի հանգուցալուծման եղանակներից մեկն անցումն է ներմուծման փոխարինման և արտահանման խթանման գործուն կառուցակարգերի կիրառման: Այդ նպատակով, նախ, պետք է թույլ տալ, որ դրամն իսկապես վերադառնա իր բնական արժեքին, ինչը կարելի է դասել կառավարվող լողացող փոխարժեքների քաղաքականությանը, ինչն առավել ընդունելի է ստեղծված իրավիճակում:

Չնայած տնտեսության ազատական համակարգին՝ պետությունն իր կարևոր մասնակցությունն ունի նաև նորարությունների միջոցով երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտադրության հիմնման և դրանց հնարավոր արտահանման համար բարենպաստ պայմաններ ձևավորելու գործընթացներում: Հաշվի առնելով ոլորտի յուրահատկությունները՝ երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների «կյանքի պարբերաշրջանը» ևս ունի իր որոշակի առանձնահատկությունները: Սկսած ներքին և արտաքին շուկաներում դրանց հանդեպ ձևավորված պահանջարկից, գնագոյացման ոչ շուկայական գործոնների առկայությունից, վերջացրած որոշակի գաղտնիության պահպանման անհրաժեշտությունը, պետական վերահսկողությունն ու որոշակի մասնակցությունը դրանց ներկայացման, զարգացման, հասունության և անկման փուլերում դառնում է հրամայական: Ավելին, ողջ պարբերաշրջանը և դրա առանձին փուլեր ձեռք են բերում առանձնահատկություններ, որոնք կարող են որոշակիորեն տարբերվել գիտական այն հիմնադրույթներից, որոնք ամրագրվել են Ռայմոնդ Վերնոնի համանուն ուսմունքում և զարգացում ստացել տնտեսագիտական այլ տեսություններում [16]:

Սրանով, իհարկե, պետությունից սպասվող աջակցությունը չի սահմանափակվում: ՀՀ կառավարությունը կարող է այլ երկրներից, մասնավորապես, ԵԱՏՄ անդամ պետություններից, փորձել պատվերներ ձեռք բերել՝ դրանք Հայաստանում կատարելու նպատակով: Այստեղ չի կարելի չկարևորել հատկապես Սփյուռքի ակտիվ դերակատարությունը: Բացի այդ տեխնոպոլիսների և տեխնոպարկերի հավակնոտ ծրագրերն այսօր ավելի շատ քան երբևէ իրական կարող են լինել նաև այն իմաստով, որ արտերկրից կարելի է ֆինանսական ճգնաժամի պայմաններում ավելի

նպաստավոր գներով ներկրել նոր տեխնոլոգիաներ, քան դա հնարավոր էր զարգացած երկրներում տնտեսական վերելքի փուլում: Ի վերջո՝ հանրապետության կառավարությունը պետք է վերանայի տեխնոլոգիաների համար նախատեսված ներմուծման մաքսատուրքերը, կրճատի դրանք՝ խթանելու վերջիններիս մուտքն ու կիրառումը Հայաստանում: Վերանայման է ենթակա նաև հարկային քաղաքականությունը: Մասնավորապես, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման նպատակով պետք է հիմնել նոր, արդիական ազատ տեխնոլոգիական գոտիներ, որոնք ազատված են հիմնական հարկերից: Ավելին, հարկային արտոնություններ պետք է տրվեն այն ընկերություններին, ովքեր ցանկություն կունենան կիրառել հայրենական արտադրության տեղեկատվական տեխնոլոգիաները և հարկերից ազատել նրանց, ովքեր պատրաստ կլինեն համակարգիչներ և այլ առնչվող սարքեր նվիրել հանրապետության տարբեր մարզերում հանրությանը հնարավորություն ընձեռելու օգտվելու տեղեկատվական տեխնոլոգիաներից: Հիշեցնենք, որ հենց նման եղանակով ԱՄՆ նախկին նախագահներից Ռոնալդ Ռեյգանի օրոք խոշոր ընկերությունները սկսեցին համակարգիչներ նվիրել կրթական և գիտական հաստատություններին՝ դրանով իսկ նպաստելով սեփական երկրում տեղեկատվական տեխնոլոգիաների արագընթաց զարգացմանը: Ժամանակն է ոչ միայն դասեր քաղել անցյալից և այլ երկրներից, այլև ճիշտ օգտագործել մեզ ընձեռված հնարավորությունները [17]:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ

1. **W. Pete Latham, Concetto R. Giuliano**, Dual-use technologies and technological cooperation

8 June 1994, SPI Digital library,

<https://www.spiedigitallibrary.org/conference-proceedings-of-spie/2214/0000/Dual-use-technologies-and-technological-cooperation/10.1117/12.177677.short?SSO=1&tab=ArticleLinkCited>

2. «Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը,

<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=3789&lang=arm>

3. ***Жерновых М. Ю.***, Технологическая безопасность как фактор обеспечения системы социальной безопасности населения, Проблемы современной экономики, N 3/4 (19/20), 2006, с. 2.

4. Control of sensitive dual-use goods and technologies, available at: <http://www.diplomatie.gouv.fr/en/french-foreign-policy-1/disarmament-and-non-proliferation/france-and-the-control-of/article/control-of-sensitive-dual-use>

5. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ստեղծումը, որի մի շարք գործառույթներ տարբեր տարիներին բաշխվել են ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության զանազան ստորաբաժանումների միջև: Մասնավորապես, կարևոր են ինչպես հեռանկարային զարգացման, այնպես էլ վերջինիս միտված 2020թ. «Մասնագետների պատրաստման բարձրագույն ուսումնական հաստատություններ – մասնավոր հատված համագործակցություն» ծրագիր: https://hti.am/edfiles/files/556_A.pdf

6. Պետական աջակցության 17-րդ միջոցառման երրորդ ծրագիր, Համաֆինանսավորման Դրամաշնորհներ, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության դրամաշնորհի մրցույթ՝ «Գաղափարից մինչև բիզնես» ծրագրի շրջանակներում, «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնյոթերորդ միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 07-ի թիվ 714-Լ որոշում: https://hti.am/main.php?lang=1&page_id=760

7. ***Harrison G. Wolf***, ITAR Reforms for Dual-Use Technologies. A Case Analysis and Policy Outline, USC Aviation Safety & Security Program available at: <http://viterbi.usc.edu/aviation/assets/002/79883.pdf>

8. UCSD and Los Alamos National Laboratory Establish Engineering Institute, available at:
http://www.jacobsschool.ucsd.edu/news/news_releases/release.sfe?id=386

9. **Snyder, J. and Van Evera, S.** 1998. Democracy and war. – Educational program. Seminar XXI: Foreign Politics, International Relations and National Interest: Massachusetts Institute of Technology Center for International Studies; Varian H.R. Microeconomic Analysis, W.W. Norton & Company, 1992, pp.17-24.

10. **Bellais, R.** (2013) "Technology and the defense industry: real threats, bad habits, or new (market) opportunities?" Journal of Innovation Economics & Management, n 12, 2013: 59-78.

11. Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն, 20 հոլիսի 2020թ.
https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf

12. **Manasserian, T.** Global Development and Challenges and Thailand's Economy Today", Journal of Population and Social Studies, Volume 14, Number 2, January 2006, pp.5-12.

13. Future of works and skills, Organisation for Economic Co-operation and Development (OECD) Paper presented at the 2nd Meeting of the G20 Employment Working Group 15-17 February 2017 Hamburg, Germany
https://www.oecd.org/els/emp/wcms_556984.pdf

14. **R. J. Anderson,** 'Security Engineering { A Guide to Building Dependable Distributed Systems', Wiley (2001) p.6.

15. **R.J. Anderson,** "Why Cryptosystems Fail" in Communications of the ACM vol 37 no 11 (November 1994) pp 32-40.

16. **Vernon, Raymond** (1966). "International Investment and International Trade in the Product Cycle". Quarterly Journal of Economics. 80 (2): 190–207. Ayal, Igal. "International Product Life Cycle: A Reassessment and Product Policy Implications." Journal of Marketing 45, no. 4 (1981).

17. **C Shapiro, H Varian,** 'Information Rules', Harvard Business School Press (1998), pp.32-34.

ПРОБЛЕМЫ ПРОИЗВОДСТВА И ЭКСПОРТА ТОВАРОВ ДВОЙНОГО НАЗНАЧЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

ТАТУЛ МАНАСЕРЯН

Ереванский государственный университет

Учитывая ограниченный характер внутренних ресурсов, необходимых для обслуживания войны, чтобы поддерживать конкурентоспособность военно-промышленного комплекса, в случае Армении и Арцаха целесообразно рассматривать упомянутый комплекс не как самый тяжелый последний вагон экономического поезда, а как экономический локомотив. В этом случае военно-промышленный комплекс может не только построить свою материально-техническую и научно-техническую базу, но и, помимо вооружений, предложить экономике так называемые товары и услуги “двойного назначения”, некоторые из которых также могут быть включены в экспортные товары, начиная с электронных устройств, некоторых видов продуктов питания и легкой промышленности и кончая высокими информационными и коммуникационными технологиями, энергетическими приборами, приборостроением, различными отраслями архитектуры и т. д.

Ключевые слова: товары “двойного назначения”, военно-промышленный комплекс, технологическая безопасность, конкурентоспособность.

ISSUES OF MANUFACTURING AND EXPORT OF DUAL-USE GOODS IN THE REPUBLIC OF ARMENIA

TATUL MANASERYAN

Yerevan State University

Given the limited nature of the internal resources required to serve the war in order to maintain the competitiveness of the military-industrial complex, in the case of Armenia and Artsakh, it is advisable to view the latter complex not as the heaviest carriage of an economic train, but as an economic locomotive. In this case, the military-industrial complex can not only build its material and technical and scientific base but also, in addition to weapons, offer the economy the so-called “dual-use” goods and services, some of which can also be included in export goods starting with electronic devices to certain types of food products, from information to communications, high technologies, energy devices, instrument making, various branches of technology, etc.

Keywords: “dual-use” goods, military-industrial complex, technological security, competitiveness.

*Ներկայացվել է խմբագրություն 16.08.2020
Երաշխավորվել է տպագրության 25.11.2020*